ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՐԱՆՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՄՈՎՍԵՍ ՉԱՊԱՆՅԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Հրանտ Մկրտչյան և Մովսես Չապանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության պետի տեղակալ և թվայնացման վարչության պետի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Քաղաք Նիժնի Նովգորոդ (Ռուսաստանի Դաշնություն), 2022թ. մայիսի 31-ից հունիսի 3-ը:

4. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Արդյունաբերական Ռուսաստանի թվային արդյունաբերություն» 7-րդ համաժողովին (այսուհետ՝ Համաժողով):

5. **Հրավիրող կողմը.**

Համաժողովը կազմակերպված էր «OMG» և «Arkona» ընկերությունների կողմից՝ ՌԴ թվային զարգացման, կապի և զանգվածային հեռահաղորդակցության նախարարության, Նիժնի Նովգորոդ մարզի ղեկավարության բարձր հովանու ներքո:

6. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման շրջանակներում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցիչները մասնակցել են տեխնոլոգիական ընկերությունների ցուցահանդեսին և մի շարք պանելային քննարկումներին, որոնք անց են կացվել փորձագիտական նիստերի միջոցով: Համաժողովի ցուցահանդեսային հատվածում իրենց ապարատածրագրային լուծումներն են ներկայացրել Ռուսաստանի Դաշնության այնպիսի խոշոր ընկերություններ, ինչպիսիք են՝ «Մոսկվա քաղաքի տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտեմենտը», «ՌոսԱտոմ», «ՌոսՏեխ», «ՌոսՏելեկոմ», «Իննոտեխ» և այլ

ընկերությունները: Նշված կազմակերպությունները ներկայացրել են իրենց նորարարական լուծումները տեխնոլոգիական տաղավարներում՝ հագեցած բարձր տեխնոլոգիական պատկերներով: Համաժողովին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության թվային զարգացման, կապի և զանգվածային հեռահաղորդակցության նախարար Մակսուտ Շադաևը և Նիժնի Նովգորոդի նահանգապետ Գլեբ Նիկիտինը: Համաժողովի փակման արարողությանը ներկա է եղել նաև Ռուսաստանի Դաշնության վարչապետ Միխայիլ Միշուստինը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովի պանելային քննարկումների և փորձագիտական նիստերի ժամանակ ներկայացվել են մի շարք շնորհանդեսներ, մասնավորապես՝ պետական հատվածի թվային փոխակերպման, սեփական ծրագրային մշակումների խթանման, թվային հարթակների գործունեության վիճակագրության, էլեկտրոնային առևտրի զարգացման, արտաքին սահմանափակումների տեխնոլոգիական շրջանցման, թվային տրանսպորտի ներդրման նոր լուծումների, հասարակության անձնական տվյալների ստանդարտացման, քվանտային ինտերնետի ապագա մարտահրավերների, թվային սպորտի զարգացման և այլ արդիական հարցերի վերաբերյալ:

Բաց քննարկումներին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցիչները, որի արդյունքում ստեղծվել են նոր գործընկերային կապեր, պայմանավորվածություններ են ձեռք բերվել մի շարք ընկերությունների հետ՝ հետագա համագործակցության, փորձի և աշխատանքային նյութերի փոխանակման ակնկալիքով: Աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել տեղեկատվական անվտանգության և թվային կառավարման լուծումներ մշակող մի շարք կազմակերպությունների հետ, գործընկերային կապեր են հաստատվել Համաժողովում ներգրավված մասնակիցների և ընկերությունների ներկայացուցիչների հետ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Մի շարք կառույցներ ու կազմակերպություններ ներկայացրեցին թվային փոխակերպման առկա մարտահրավերների, ընկերությունների լուծումների եղանակների և ապագա անելիքների տեսլականը, ինչպես նաև եղան հետագա համատեղ համագործակցության առաջարկներ, որոնց հետագա ընթացքը կքննարկվի ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության

նախարարության ղեկավարության և շահագրգիռ գերատեսչությունների հետ, իսկ արդյունքների հիման վրա կկայացվեն համապատասխան որոշումներ:

Հատկապես հատկանշական էր «Սբեր» ընկերությունների խմբի կողմից մշակված «ԳոսՏեխ» թվային էկոհամակարգը, որը առաջարկում էր նորմատիվային կարգավորումների, ֆինտեխ ծառայությունների, միգրացիոն, առողջապահության և սպորտի ոլորտում մի շարք ծառայությունների փաթեթ ամբողջական թվային տարբերակով և նորարար մոտեցումներով: Համաժողովում անցկացվեցին նաև կիբեռխաղերի մրցույթներ:

Միջոցառմանը մասնակցությունը նոր հնարավորության հարթակ էր ռուսական փորձի ուսումնասիրության համար և Հայաստանի Հանրապետության պետական հատվածում այս տեսանկյունից Ռուսաստանի Դաշնության թվային փոխակերպման լավագույն փորձի հնարավոր ներդրման հարցերի պարզաբանման համատեքստում ուներ կարևոր նշանակություն:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Հրանտ Մկրտչյան

Մովսես Չապանյան

07.06.2022թ.